

Աղբիւրի յաւելուած

լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 22 կիրակի 15 յունիսի | ութերորդ տարի 1897

ԹԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրեմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստուած մեծադիր ֆոտոտիպ-գրաւիւրը պատկերը, 2) *Մայրիկի ննջարանում*, մի շքեղ խրոմօ (տպաւորած), 3) *Ոսկէ շղթաներում*, կամ *Հարեմի աղջիկը*, 4) Իւրաքանչիւր ամիս *Պարիզի մոդաներ*, բացատրութիւններով։
ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (տարատարման 4 ր. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. (տարատարման 10 ր. կամ 30 ֆր.), ամսական Տարազը 50 կ. Աղբիւրը—25 կ. պրեմիաները տանում է Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի։
Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Тараз կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Ժեւեւրալ Բուցեհի գցել հին Թէոդորայի բանտերից մեկը։
(Թէոդորա, եր. 358)

ՍԱՓՈ *)

Պօեմա

IV

Եւ օրն օրի վրայ անցնում էր
Տաղնապալի, տխրագին,
Սաֆոն իրան մինչ յանձնում էր
Իր զգացմանը չերմագին։
Եւ նրա երգերը հիացման
Սիրոյ քաղցրը անուրջով,
Եւ թախանձանքըն արբեցման՝
Պաղատագին մրմունջով—
Չէին հասնում այն Փաօնին,
Գեղեցկադէմ այդ հէլլէնին։
Յափշտակուած մրտածումով
Էոլթեան վրայ աշխարհին
Եւ անհանգիստ մի հարցումով
Կեանքի մասին մարդկային՝
Սիրոյ յուզիչ ըզգացումը
Փաօնին էր միշտ օտար։
Մինչդեռ իրանց հիացումը,
Տաղնապը և թախանձումը

*) Տես Տարազ № 21.

Հելլէնուհիք սիրահար
Խօսում էին անդադար,
Նա, միշտ պայծառ գեղեցկութեամբ,
Անտարբեր էր դէպի նրանց
Եւ նրա սիրտը, կարծես սառ ամպ,
Սիրոյ համար էր անթափանց։
Իսկ ընտրեալին Ապոլոնի
Իր խոր կիրքն էր կուրացնում,
Սիրոյ համար այն Փաօնի
Նա քընարն էր լացացնում,
Եւ խայթըւած հրպարտութեամբ,
Ջերմ, հրրալից իր տենչում,
Ներքին անզուսպ մի բարկութեամբ
Ինքն իրան էր միշտ տանջում։

V

Հելլէնուհիների խմբերգը

Զարդարենք մեր մետաքսէ
Սաղերն ծաղկէ պըսակով,
Քընարը թող երգ ասէ,
Պարենք նազիկ հասակով։
Հելլադայի երկնքի
Կամարի տակն սիրասուն
Ահա էօլն մեր կեանքի
Հովը փըչեց զովասուն։
Ահա թառշէ դալարը
Անկողնու պէս է փռւում.
Քաղցրը հնչում է լարը,
Մինչ վերջալոյսն է վառւում։
Զքնաղ կոյսեր Հելլասի,
Անհոգ սրտեր թռչնակի,
Հէնց որ լոյսը նըւազի՝
Լրսենք երգը խօսնակի։
Եւ ձայներով քաղցրագին
Միմեանց դաշտնիք շըշնջանք,
Դաշտնիքն անույշ, սիրագին
Առւի ձայնով մրմնջանք։
Ջուտով գիշերը կիջնէ,
Կըշողայ աստղն առաջին,
Խաղաղ լուսինը կ'ելնէ՝
Վրկան սիրոյ հառաչին։
Վայրերն մի նոր լոյսի տակ
Կախարդական կըլինեն,
Ցաւ ու ժըպիտը յստակ
Հանգստեան մէջ կըքընեն։
Կախնաչազարդ բլրակներ
Եւ հովիտներ ծաղկալի,
Ծովի ջրեր, վըտակներ
Կառնեն մի նրբիհ փափկալի։
Զքնաղ կոյսեր Հելլասի,
Պարենք, ծաղկով զարդարւենք,
Հէնց որ լոյսը նըւազի՝
Մեղմիկ նինջով օրօրւենք։

Երիտասարդների խմբերգը

Գեղեցկուհիք մանկահասակ,
Հելլադայի դուստրներ,
Միշտ պարեցէք, հիւսէք պըսակ —
Ուրախութեան պարգևներ։
Ձեր շրթների ճոխ վարդերը,
Խոր կայծը ձեր աչքերի
Վառ բընութեան են զարդերը
Եւ պատճառ մեր վերքերի։
Պարեցէ՛ք՝ ձեր արբեցուցիչ
Գեղեցկութեամբը ծաղկած,
Երգեցէ՛ք, ձեր հմայեցուցիչ
Ձայնը մեր սիրտն է ծակած։
Վառ երկնի տակ, դալարի վրան
Թեթև ոտքով էք պարում,
Ձեր նրբակազմ, ճրկուն իրան
Աստւածներին հրապուրում։
Եւ Ամուրն է, սիրատարփիկ
Ձարահրճի տաղերով,
Ձեր դէմքն անում կարմիր արփիկ
Թաքուն խօսքի տողերով։
Բայց թէ ձեղնից մէկը չըկայ
Ձեր խմբերգին ու պարում.
Նըրա ցաւին ծովն է վրկայ,
Նրա սիրուհանքը — քընարում։
Գեղեցկութեան մեծ դիցուհին՝
Արուսեակը նախանձեց՝
Ապոլոնից երբ երգչուհին
Ոսկէ քընարը գանձեց։
Եւ նրա զաւակն կոյսի չքնաղ,
Ծաղիկ հասակն խաւարեց,
Ձար Ամուրը դրա հետ, աւաղ,
Իրան անզութ շատ վարեց։
Անզուսպ խանդի անմահ հուրը
Սաֆոյի սիրտը կրակեց,
Այն օրից երբ սիրոյ խորը
Ցաւը կոյսին վարակեց։
Հրպարտ Փաօնն է անտարբեր,
Նըրա զգացման է օտար,
Արուսեակը չար, անհամբեր
Վրրէժ առաւ անարդար։
Օ՜, աղերսներ դուք ուղղեցէք

Աստւածներին գըթառատ,
Ձեր դիցուհուն էլ խոստացէք
Սիրոյ պարգեւ լիառատ։
Եւ Փաօնի սիրտը քարի
Թող քաղցրանայ մեղրի պէս,
Եւ հնչունը կոյսի լարի
Թող բերկրանքը երգէ մեզ։

Հէլլէնուհիների խմբերգը

Մայր է մտնում արևը,
Ձէ շարժըւում տերևը,
Բընութիւնը կիսաքուն
Մեզ կանչում է դէպի քուն.
Մինչդեռ դողում է լարը,
Հեծում կոյսի քընարը։
Մեր դիցուհին Արուսեակ,
Գեղեցկութեան վառ պըսակ,
Սրամադրին նըմանեց՝
Կոյսին պատիժ սահմանեց
Եւ նրա սէրըն ու քընար
Արաւ դըժոխք նրա համար։
Եւ մինչ կոյսն է հառաչում,
Կանչում, լալիս, աղաչում
Եւ իր ձեռքերն՝ յուսահատ
Կոտրատում է անընդհատ,
Արուսեակը գեղադէմ
Ծիծաղում է նրա դէմ։
Իսկ Փաօնը վեհաբար,
Իր մեծ մտքում անդադար
Խորասուզած ու վրսեմ,
Թէ դըժոխքի հետ նըսեմ,
Թէ աստղերի հետ մենակ
Խօսում է միշտ, շարունակ։
Անմիտ Սաֆո. վերաւոր
Սրտով կըմնայ սրգաւոր,
Սիրուն Փաօնն ջերմ սիրով
Արուսեակի համբոյրով
Պէտք է միայն յագենայ.
Հեշտանքի մէջ քընանայ։
Աստւածներն են սահմանել
Եւ նրան այդպէս սընանել։
Մենք խղճում ենք Սաֆոյին,
Նրա տանջանքը սիրալին,
Բայց մեծ է մեր Արուսեակ,
Անմահ սիրոյ այդ պըսակ։
Դէ՛հ, մեր պարը դադարենք,
Մեր սիրածին մենք փարենք,
Մայր է մտնում արևը,
Ձէ շարժըւում տերևը,
Բընութիւնը կիսաքուն
Մեզ կանչում է դէպի քուն։

Ա. Լ.

(Կըշարունակւի)

ԹԷՈԴՈՐԱ

Պատմական վէպ Ի. Փիօրեցիցիի

(Շարունակութիւն *)

XXXV

ԱՆՏՈՆԻՆԱՅԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Թէներալ Բելիզարիոսի Հեռանալուց յետոյ, Պարսկաստանում պատերազմը, բիւզանդական կառավարութեան համար վատ ընթացք ստացաւ։ Խոսրով Թագաւորը մտաւ Պալեստին և նւաճեց Երուսաղէմը։ Կայսերական զօրաբանակում մեծ անկարգութիւն էր տիրում, կարգապահութիւնը խանգարւել էր, սկսւել էին փախուստներ, կողոպտում էին պետական փողերը։ Այս տեսակ պայմաններում Բելիզարիոսը նորից դուրս եկաւ պատերազմի դաշտ։ Զինւորական խորհրդում նա վճռել էր յարձակում գործել, որի ժամանակ նա գործ դրեց զինւորական խորամանկութիւն։ Բազմաթիւ խարոյկների միջոցով, որ վառել տւեց կէս գիշերին, նա խաբեց Թշնամուն, երևակայել տալով որ բիւզանդական զօրքերը մեծ պաշտպանութիւն են գտել։ Խոսրով Թագաւորը խաղաղութեան այնպիսի դաշն կապեց, որ ձեռնտու էր բիւզանդացիների համար։

Այդ իսկ միջոցին Սիւրիայում, Աֆրիկայում, Ասիայում և Եւրոպայում սարսափելի Թշւառութիւն պատահեց, որ պատմութեան մէջ յայտնի է variolas անունով։ Դա ժանտախտն էր։ Պատմաբանների ասելով այդ դաժան ցաւը հետևեալ նշաններն ունէր։ Նախ խոցոտում էր դէմքը, մանաւանդ աչքերը, յետոյ առաջ էր գալիս ուռոյց, ջերմ և ապա հիւանդը մեռնում էր։ Մի քանի հիւանդներ ցնորւում էին, իսկ մի քանիսն էլ յիշողութիւնը վրան մեռնում էին։ Իտալիայի ամբողջ քաղաքի բնակչութիւնը միասին էր մեռնում։ Մանաւանդ Կոստանդնուպոլսում այդ հիւանդութիւնը սարսափելի էր տարածւած։ Սկզբում մեռնողների Թիւը, աստիճանաբար բարձրանալով, հասաւ մի օրում մինչև տաս հազարի։ Մի կարգ տներ փակւեցան և ամբողջ քաղաքը նմանւում էր գերեզմանատան, ուր Թաղող չկար։ Բոլոր վանքերը մասնակցեցին Թաղումներին, բայց չէին կարողանում հասցնել, հազարաւոր դիակները ընկած էին փողոցներում և ապականում էին օդը։

Յուստինիանը և Թէոդորան Թողին Կոստանդնուպոլիսը և տեղափոխւեցան իրանց դղեակներից մէկը, որ գտնւում էր ծովի ափին։ Բայց և այդ

*) Տես Տարազ № 21.

Հրաշալի տեղում երևեցաւ ժանտախտը: Երբեմն պատհակազօրքի զինուորներից և պալատականներից ղոհեր էր տանում: Յուստինիանը շատ վախենում էր մահից, այն ինչ Թէոդորան ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում հիւանդութեան վրայ, հոգում էր ամուսնու մասին, աշխատելով հանգստացնել նրան: Ի հարկէ Թէոդորայի ամուսնական սէրը չէր, որ դրդում էր այդ անելու: Նա վախենում էր, որ կայսեր մահից յետոյ, ինքը չի լինիլ կառավարիչ: Կոստանդնուպոլսում երևացած ժանտախտի լուրը հասաւ նաև Սիւրիա: Բելիզարիոսի բանակում լուր տարածուեց, որ Յուստինիան կայսրը մեռել է: Թեներալների մէջ իսկոյն հարց ծագեց, թէ ով պէտք է բռնի նրա տեղը: Շատերը շատ հիմնաւոր էին գտնում այն կարծիքը, որ Թէոդորայի իշխանութիւնը վնաս է պետութեանը և որ զօրքերը չպիտի հպատակուին նրան: Շատերը յայտնում էին Բելիզարիոսին ուղղակի երես առ երես, որ նա, որպէս արժանաւոր, պէտք է կայսր ընտրուի: Բայց շուտով այս խօսակցութիւնները դադարեցին, որովհետև ճիշտ լուր ստացուեց Կոստանդնուպոլսից, որ ժանտախտը զգալի կերպով քչացել է և որ Յուստինիան կայսրը առողջ է: Թեներալ Բելիզարիոսին նախանձողները՝ պալատական խարդախները, ինքն ըստ ինքեան ի հարկէ, իսկոյն յայտնեցին Թէոդորային Սիւրիայում պատահած անցքերի մասին: Նրանք հաղորդեցին կայսրուհուն, որ երբ ձայն տարածուեց Յուստինիանի մահուան մասին, զինուորները ժեներալ Բուցէի զեկավարութեամբ, դիտաւորութիւնն ունէին ընտրել կայսերական գահի համար Բելիզարիոսին: Թէոդորան իսկոյն յայտնեց այս լուրերը իր ամուսնուն և պնդեց անյապաղ կանչելու Բուցէ և Բելիզարիոս ժեներալներին Կոստանդնուպոլիս: Յուստինիան կայսրը սրտանց ընդունեց իր ամուսնու հաղորդած լուրը և իսկոյն հրամայեց ուղարկել ժեներալներին ժամանել մայրաքաղաք: Ժանտախտը այդ ժամանակ վերջացել էր և քաղաքը մերթընդմերթ ընդունում էր իր սովորական տեսքը: Չէնց որ ժեներալները եկան Կոստանդնուպոլիս, իսկոյն Բուցէին ձգեցին Թէոդորայի սարսափահար բանտերից մէկը առանց լոյսի և օդի, որտեղից յոյս չըկար դուրս գալու: Մինչև անգամ սենեակի դռները չէին բացում և դժբախտ կալանաւորին, նրա գոյութիւնը պահպանելու համար, երբեմն վերևից մի կտոր հաց էին ձգում:

Նոյն վիճակը սպասում էր նաև ժեներալ Բելիզարիոսին, բայց նրան փրկեց Անտոնինան: Թեներալի ամուսինը աշխատում էր նրա համար, ոչ այն պատճառով, որ ինքը նրան սիրում էր, այլ իր սեփական շահերը աչքի առաջ ունենալով: Նա հասկանում էր, որ ամուսնու անկումը նախ և առաջ կազդէ իր վրայ: Նրա միջնորդութեանը Թէոդորան պատասխանում էր իր ընկերուհուն, որ աչքի առաջ ունենալով նրա արած ծառայութիւնները Սիլվերիո պապի և Ջիովաննի դի Կապադոչիոյի սպանութեան ժամանակ, նա պատրաստ է ներել դաւաճան Բելիզարիոսին, բայց նախ քան վերջնական ներումն շնորհելը, ինքը կայսրուհին ցանկանում էր ապացուցել Անտոնինային, որ ժեներալ Բելիզարիոսը պարտական էր իր կեանքի փրկութեամբ Անտոնինային:

Բոլոր պաշտօններից հեռացրած, արհամարհած նրանցից, որ քիչ առաջ նստանում էին նրա առաջ, նախկին զօրապետը ընկաւ ոդով, նամանաւանդ այն ժամանակ երբ կայսեր և կայսրուհու ընդունելութեան ժամանակ նա անսանձեցաւ դաւաճան: Այն օրից յոյսը նրան թողեց, նա ամեն մի րոպէ սպասում էր իր մահուան դատավճռին: Անտոնինան նրա հետ լրբաբար էր վարւում, այնպէս որ խեղճ Բելիզարիոսը ինքն իրան ստիպած էր հարց տալ, թէ իրօք դաւաճան չէ ինքը: Այդ դրութեան մէջ էր, երբ մեկ անգամ Բելիզարիոսին յանձնեցին կայսրուհուց ուղարկած մի մագաղաթ: Դժբախտը այնքան ոյժ չունէր կարդալու այն, հաւատացած լինելով, որ իրան ուղարկած է մահուան դատավճիռ:

«Դու, ի հարկէ, գիտես, սիրելի Բելիզարիոս,— գրում էր կայսրուհին,—թէ որքան շատ վիրաւորեցիս մեզ — դու արժանի ես օրինակելի պատժի: Բայց ի նկատի ունենալով քո Անտոնինա ամուսնու առաքինութիւնները, ես ներում եմ մեղքերդ և յանձնում եմ կեանքդ Անտոնինային: Իմացիր, ժեներալ Բելիզարիոս, որ դու պարտական ես քո կեանքովդ միմիայն քո ամուսին Անտոնինային, որին դու պէտք է երախտապարտ լինիս»:

Խեղճ ժեներալը խելքը կորցրեց ուրախութիւնից: Նա ընկաւ ծնկաչոք Անտոնինայի առաջ, գրգուեց նրա ոտքերը, կրկնելով.

—Իմ փրկիչ, երդւում եմ քեզ այս րոպէից, լինել ոչ միայն քո հաւատարիմ ամուսինը, այլ և ամենահնազանդ ստրուկը:

Անտոնինան սառը ընդունեց իր ամուսնու այս շնորհակալութիւնները:

Նոյն իսկ նա ծիծաղով պատմում էր իր բարեկամուհի Թէոդորային այս տեսարանը:

Այսպէս ընկաւ այն մարդը, որին պատմութիւնը վերագրում է ընդունակ հրամանատարի բոլոր արժանաւորութիւնները:

(Կըշարունակի)

ՄՍԻՐԸ

Լուսադէմին առուակի մօս
Փաղկեց ըն շաւ նագելիս,
Այդ ժամանակ ջուր առնի լո
Դու սար եկար, իմ անգին:
Ամբողջ գիշեր, ցուրը կորցած,
Նրան թովեց լուսընկան.
Ամբողջ գիշեր առուն երգեց՝
«Ջուրդ անուշ, սիրական»:
Ամբողջ գիշերն ասղերն անվերջ
Վերան ըողեր թափեցին.

Ռոլորն անյագ ջերմ աղերսով
Սէր նրանից խընդրեցին։
Լոյսը շողաց... Առւակի մօս
Ծաղկեց շուշան-նազելին,
Այդ ժամանակ ջուր առնելու
Դու սար եկար, իմ անգին։
Լուռ էր, խաղաղ... Սարի վրայ
Հովն էր անուշ սօսափում.
Արշալուսի վառ ծիրանին
Վարդ էր վրադ թօթափում։
Շուշանն, անգին, ինձ կախարդեց
Եւ դու նրան խաղեցիր.
Քնքոյշ սիրով մեղմ գգւանքով
Մատաղ կրծքիդ բուսուցիր.
Սակայն չ'անցաւ մի չնչին ժամ
Դու նրանից ձանձրացար.
Եւ խեղճուկին դէն ձրգելով,
Կոխոտեցիր խոխոսաբար։
Այդպէս ահա, ո՜ չար աղջիկ,
Իմ սէրն, աւա՜ղ, մերժեցիր.
Եւ ինձ համար խաղ դարձնելով,
Ոտներիդ տակ տոռեցիր...

Ոնոփրիոս Անոփեան

ՀԱՅ

Հրաշակերտ մ'ալ

Տարագի ընթերցողները, մանաւանդ վասպուրականցիները պիտի զարմանան, երբ ըսենք թէ Րումանիոյ թագաւորութեան մէջ, Արճէշ անունով նահանգ մը կայ, որուն մէջ կըգտնուի Արճէշ գիւղաքաղաքը և ասոր մէջ ալ Արճէշի Հոյակապ վանքը։

Րումանիոյ բոլոր եկեղեցիներու թագուհին կըննկատուի Արճէշի եկեղեցին իր հրաշալի ճարտարապետութիւնովը և գեղարուեստական քանդակներովը։

Այս հրաշակերտի շինութեան մասին շատ առասպելախառն պատմութիւններ յօրինած է ժողովուրդը, սակայն պ. Հրժտու Համբաւաւոր գիտնականը սա կարծիքը յայտնած է թէ՝ XII կամ XIII դարում Հայ գաղթականներ եկած են այս երկիրը և անոնց ձեռքով շինուած է այդ նշանաւոր եկեղեցին։

Գաղթականները եկած են երևի Վասպուրականի Արճէշէն և իրենց ի յիշատակ հայրենիքի, բնական էր, իրենց կառուցած եկեղեցին և այդ տեղէն անցնող Մարիսքա (Marisca) գետն ալ Արճէշ անունով մկրտած լինին։

Այս բանասէրը կապացուցանէ, որ եկեղեցին շինուած է Հայոց ձեռքով։ Արդարև տաճարը հայկական ձև ունի և կըյիշեցնէ տեսնողին կաթողիկէներով զարդարուած Հայաստանի և Կովկասի եկեղեցիները. ոչ մի կասկած չըկայ, որ շինուած ըլլայ Անի գաղթող ճարտարապետներու կամ անոնց աշակերտներու ձեռքով։

Պրոֆէսսոր պ. Օտոպէսքու իր Ֆրութիւնք Serierei անուն երկասիրութեան մէջ, խօսելով այս եկեղեցւոյն վրայ՝ կըհարցնէ—«արդեօք Կ. Պոլսէն և Անատոլուէն յոյն գործաւորներ հաւաքեց (Նէակսէ Պէսարապի), որոնք արդէն բանած էին մխալիման փաուիշանաց մեծ մզկիթներու մէջ։ Արդեօք գործաւորներ ժողովեց աւելի հեռուէն՝ Հայաստանի և Վրաստանի երկիրներէն, ուր անոր տեղացի քրիստոնեայ թագաւորներ եկեղեցիներ կըկանգնէին ճիշտ Արճէշի եկեղեցւոյ նման կերտուած ու զարդարուած։ Ոչ ոք այս մասին բան մը չըգրեց, այժմ ոչ ոք այլևս մեզ պիտի յայտնէ»...

Պ. Թոչիլէսքու ալ ծանօթութիւն մը կուտայ Արճէշի վանքին վրայ. «Հայաստանի և Վրաստանի եկեղեցիները, Սամթաւիս, Գէլաթ, Գապէն, Ախթալա, Սաֆարա և այլն և այլն, ամենքն ալ դարերով աւելի հին են քան մեր յիշատակարանը, մեզ կուտան եթէ ոչ նախատիպը, այլ գոնէ հարկ եղած տարրերու մեծ մասը կազմելու համար իր քանդակագործած զարդարանքները։ Չոս կրզտնենք միևնոյն կամարակապ յօրինուածը, վերոյիշեալ եկեղեցիներու պատերու արտաքին երեսին վրայ գործած կամարը, կամ պատերու պատուհանները քանդակած. միևնոյն հիւսուածքը և զարդերը, միևնոյն վարդաձևերը և վերջապէս ինչ որ կարևորութիւն ունի, միևնոյն տարածութիւնը բարձրութեան մէջ, միևնոյն ոգին և միևնոյն ոճը»...

Պ. Թոչիլէսքուի գիտնական լուրջ ուսումնասիրութեան վրայ կաւելցնենք թէ կաթողիկէ ձևը Հայաստանեայց եկեղեցւոյ յատուկ է, և Վրաստանի եկեղեցիները ընդօրինակած են մեր եկեղեցիներու նախատիպէն և ընդհանրապէս շինուած են Հայ ճարտարապետներու ձեռքով։

Մանաւանդ պէտք է ի նկատի առնենք, որ վրաց ազգը, ոչ մի ճարտարապետական մնացորդ չունի և եղածներն ալ կըյիշեցնեն Հայկական ճարտարապետութիւնը։

Պատմութիւնը կըհաստատէ Արճէշցիներու գաղթականութիւնը. Արճէշ անունը րումանական բառ չէ և դիպուածով ալ չէր կրնար ծնիլ։ Եկեղեցւոյ ճարտարապետութիւնը, ձևը, ոճը, մեր կաթողիկէ եկեղեցիներէն ոչ մի բանով չեն տարբերիր։

Ալ ինչ կասկած որ Արճէշի հրաշակերտը Հայկական ճարտարապետութեան յաջող յղացում մը եղած չըլլայ։

Պուքրէշ Ռօբաճ-Բենիկ

Պարսկուհի.

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

(Կատիւղ Մենդէսից)

Գրազ եկողներ

Մեզանժը ասաց լինձ.

—Սիրելիս, ես գրազ եմ գալիս, որ դու լինձ վրայ ես մտածում:

—Ո՛հ, բոլորովին ոչ, հաւատացնում եմ քեզ.

—Իսկ ես քեզ ասում եմ, որ մտածում ես:

—Իսկ ես քեզ ասում եմ, որ ոչ.

—Ապա ինչի՞ մասին ես մտածում, թոյլ տուր հարցնել:

—Փոքրիկ վարդի մասին, որ բացւել է փշոտ թփի վրայ:

—Դու տեսնում ես, որ ես տարայ: Փորձիր հերքել, որ ես իմ երեխայական, քնքոյշ-վարդ շըրթունքներով և մեղմ վիճասիրութեամբս նման չեմ մասրենու ծաղկին:

Ես ժպտացի յաղթահարւած:

Մի րոպէից յետոյ Մեզանժը կրկին հարցրեց.

—Սիրելիս, երկրորդ անգամն եմ գրազ գալիս քեզ հետ, որ դու մտածում ես իմ մասին:

—Ոչ, ոչ, հաւատացնում եմ քեզ:

—Իսկ ես ասում եմ քեզ, որ մտածում ես:

—Իսկ ես քեզ ասում եմ, որ ոչ:

—Դէհ, ասա շուտով, ո՞ւմ մասին ես մտածում:

—Թուխկատար Թուչնիկի մասին, որը ճուռաղում է եղէգների և փիլիկների մէջ:

—Ա՛յ, տեսնում: ես Կրկին տարայ Ես հաւատացած եմ, որ դու չես համարձակւիլ հերքել, որ իմ ձայնը նման է Թուխկատարի ճուռաղիւնին:

Ես ստիպւած էի կրկին յաղթւած համարել լինձ:

Մի քիչ յետոյ, Մեզանժը կրկին հարցրեց լինձ.

—Վերջին անգամ ես դարձեալ գրազ կըզամ քեզ հետ, որ դու իմ մասին ես մտածում, սիրելիս:

—Աւաղ, ես հաստատում եմ, որ ոչ:

—Իսկ ես ասում եմ՝ այո.

—Իսկ ես ասում եմ՝ ոչ:

—Թոյլ տուր հարցնել ինչի՞ մասին ես մտածում:

—Հաւատարիմ ծիծեռնակի մասին, որ մնում է միշտ միևնոյն բնում և սիրում է անդաւաճան սիրով.

—Ո՛հ, այս անգամ ես տանուլ տւի:

Շար. Մի.-Ճովի.

գեղարւեստ

թատրոն, նկարչութիւն

Գարնանային սեզոնը Թիֆլիսում վերջացաւ յունիսի 10-ին: Այդ օրը Լիւդիգովի դրամատիկ խմբի հրաժեշտի ներկայացումն էր: Թէ այդ երեկոյ և թէ դրա նախընթաց գիշերը պ. Լիւդիգովի բենեֆիսին թատրոնը ծայրէ ծայր լիքն էր:

Թիֆլիսի թատերասէր հասարակութիւնը եկել էր այդ երկու ներկայացման իր համակրութիւնը և գոհունակութիւնը մատուցանելու խմբին և նրա ներկայացուցչին:

Օւասիօններն անկեղծ էին, նոյն իսկ սրտաշարժ: Պ. Լիւդիգովին իր խմբի բոլոր անդամներն էլ բեմի վրայ հրապարակաւ ցոյցեր արին, ընծայ տըւին. սրանց կողմից շնորհակալական ճառ խօսեց պ. Պետոցկի, որին Լիւդիգով պատասխանեց: Մի խօսքով այսպիսի դէպքերում սովորութիւն դարձած բոլոր ձևերը կատարեցին: Հրաժեշտի երեկոյթին ընծաներ ստացան և այն արտիստները, որոնք բենեֆիս չէին ունեցել: Հասարակութեան էնդուզիազմն այնքան էր մեծացել, որ նրանք կեցցէների հետ գոռում էին ուռռա և спасибо.

Առհասարակ դրամատիկ ներկայացումների զգալի % յաճախողներ էին: Հայերը գալիս էին յայտնի դրամատուրգների պիէսները տեսնելու, Թէև ամեն երեկոյ թատրոն յաճախում էր հայերից և մի որոշ շրջան:

Այսօր երբ այդ ներկայացումները վերջացան, շաբաթական մեր տաճ հաշիւները կամենում ենք ամփոփել մի հարևանցի համեմատութիւն կազմելով և զուգընթաց դնելով հայ մշտական ցիր ու ցան խմբի անդամների հետ:

Պ. Լիւդիգով. շարժւածքը լաւ, դեղեցիկ գրիմ է անում, արտասանութիւնը դուրեկան չէ, յաճախ մոնատոն է ձևերը, փորձւած դերասան: Մի քանի դերերի մէջ սքանչելի է, Տրիլբի դրամի մէջ Սւեցգալու դերը կատարում է շքեղ: Յաջող է խաղում, ուր երևում է սակայն նրա միակերպութիւնը: Հայ արտիստ Պետրոսեան, եթէ միայն դերը մշտ լաւ սովորէ, համարձակ կարող է փոխարինել պ. Լիւդիգովին:

Պ. Սմիրնով. կատարեալ կոմիկ է, բընդեխիզճ դերակատար: Մեր կարծիքով այդ խմբի մէջ առաջին տաղանդն է: Մեր կոմիկ Տէր-Դաւթեան սրանից աւելի տաղանդաւոր է, միայն նրան պակասում է արտիստին անհրաժեշտ կրթութիւնը:

Պ. Բաղրով իր դերերի մէջ մրցակից չունենալով՝ գրաւել էր մանաւանդ կանանց: Ուժեղ դրամատիկ դերեր ոչ միայն լաւ, այլև միջակ էլ չէր կարողանում կատարել: Վ. Հիւգոյի Էրնանու և Բեռնսընի Սնահկութեան մէջ նա բոլորովին ապացուցանում է մեր կարծիքը: Պ. Աբելեան անհամեմատ բարձր է պ. Բաղրովից:

Պ. Պետոցկի բարեկիրթ դերասան

է, գործը հասկացող, առոգանութիւնը անտանելի։ Պ. պ. Յարութիւնեան, Աղայեան մասամբ կարող են սրան փոխարինել։

Պ. Բէժիճ անհամ դերասան է. հայ խմբի մէջ սրա պէս մի շարք արտիստներ կան։

Կանայք պ. Լիւդվիգովի խմբի մէջ աւելի էին աչքի ընկնում։ Տ. տ. Տիրասպոլսկայեա, Վոլգինա, Իւրեւա դրամատիկ դերերի մէջ. Տ. տ. Մարտինովա՝ Usrեճուա. սուբրեs Կայինի երկու ևս պառաւ կանանց դերերի համար՝ տ. տ. Պուխինովա և Կարպենկո։

Ընդհատենք ինչու տ. Մարտինովան այդքան սիրելի է դարձել մեր հասարակութեան։ Արդեօք դա մի թիւրիմացութիւն չէ։ Օր. Վիրգինե Գարագաշ հարիւր գլխով բարձր է նրանից։ Իսկ օր. Մարի-Ֆրանոյե, եթէ իր մի քանի օպերետային ձևերը թողնէ, այդ վուլգար դերասանուհուց շատ լաւ դերասանուհի է։

Տ. Մելիքեան, ինչպէս ասում են, հարիւր Usrեճուայի նման սուբրէտների տասն անգամ կըտանի աղբիւրի մօտ և ծարաւ չեռ կըբերի։

Տ. Կարպենկո շատ հասարակ դերասանուհի է։ Օր. Վարդուհին կատարեալ տաղանդ է նրա մօտ և մեր համոզմունքով լաւ ոյժ հայ խմբի համար։

Տ. Զաբել բարձր է տ. Պուխինոայից, ափսոս միայն, որ յարգելի դերասանուհուն շատ է վնասում ձայնը։

Այժմեան մեր խմբի մէջ մենք չունենք տարաբախտաբար տ.տ. Տիրասպոլսկայա, Վոլգինա և Իւրեւայի պէս դերասանուհիներ. Տ. Սիրանոյե, օր. Վարդիթեր և թէ թատերասէր օր. օր. Իզմիրլեան ու Խիքարեան չանձն առնեն մտնել մեր մշտական խմբի մէջ, մենք վստահ ենք որ հայերը կարող են ունենալ հէնց առաջիկայ սեզոնից մի խումբ, որ կարող կըլինի գոհացնել մեր հասարակութեանը։ Սակայն մենք ունենք և պ. Օհանեան, որ կարող է պ. Բաղրովին նոյնպէս փոխարինել։ Մի բան պակասում է հայ խմբին, փորձած րիժիսսօր և երկրորդ՝ դերերի անպայման լաւ սերտելը։ Իսկ եթէ հայ արտիստը այնքան ռոճիկ ստանայ, որ կարող լինի պահել օրինաւոր գարդերոպ ու դերը այնպէս ուսումնասիրէ ինչպէս հարկն է, այն ժամանակ անվիճելի կըլինի յաջողութիւնը։

Թուս դրամատիկ խումբը իր ներկայացումները տալով մեծ թատրոնում, —ուր դէկօրասիօնները շքեղ են, դահլիճը փառահեղ, բեմը սքանչելի, հագուստները և գերմը սիրուն, դերը հաստատ իմանալիս, —ունեցաւ և մեծ յաջողութիւն։ Աւելացրէք, որ այդ խումբը ղեկավարում էր լաւ րեժիսսօր և հասարակութեան պահանջները իմացող մարդ։ Բէկլամները, կողմնակի պատճառները, հասարակական յաճախ կազմած թիւր կարծիքները երբէք չըպիտի լինին հիմք գեղարեստը մեր երկրում տարածելու։

Անցեալ տարի Տարազի մէջ գեղարեստի քրոնիկոնում թուրքիկ կարծիքներ յայտնելով, մենք ի միջի այլոց ասացինք, որ Սարրա Բեռնար իջել է մինչև Դուզի, սակայն վերջինս կարող պիտի լինի բարձրանալ մինչև նախկին Սարրա Բեռնար։ Այժմ տարաբախտաբար մեր անցեալ տարւայ ասածները հաստատւում են։ Պարիզի լրագիրները հաղորդում են, որ Դուզին տարաւ յաջողութիւնը և Սարրա-Բեռնար ստիպւած է խոստովանել նրա տաղանդը։ Անվճռական դիրք բռնած րեցէնզենտները, հասարակած կարծիքը, որ մինչև այժմ շղթայած էր պահել Սարրա Բեռնարի հուչակած անունը, այսօր փշրւած է դէյուզիի Դուզիի տաղանդով առանց րեկլամների և առանց հասարակաց թիւր կարծիքների աջակցութեան։ Մենք կարիք չենք զգում գեղարեստը կաշկանդել հասարակական կեանքի տենդենցիայով։ Ընկերս պէտք է նա զարգանայ և մատակարարէ իր փրկարար սնունդը անխտիր հասարակութեան բոլոր խաւերին։ Յանկալի էր, որ Թիֆլիսի ինքնաճանաչ երիտասարդութիւնը աջակցէր հայ ցիրուցան մշտական խմբին միանալու և առաջիկայ սեզոնից սկսելու խելացի կերպով մտածած գործունէութիւն։

—

Այս յունիսի 25-ից մինչև օգոստոսի վերջերը պ. Պետրոսեան վերցրել է Ղուշում պ. Մ. Խանդամիրեանի թատրոնը։ Անշուշտ պ. Պետրոսեան չի բաւականանալ իր հետ տանելով մի երկու դերասան և իր խումբը չի կազմիլ թատերասէրներից, այլ մեր փորձւած դերասաններից կըպահէ Ղուշում մի օրինաւոր խումբ։

Ըրպէտք է մոռանալ, որ Ղուշին միակ գաւառական քաղաքն է, որ ունի թատրոն իր բոլոր յարմարութիւններով և ուր ժողովուրդը մեծ սիրով այցելում է։ Ուրեմն հայ դերասանները պարտական են Ղուշում ղեկավարել ոչ միայն իրանց նիւթական շահն ի նկատի առնելով, այլ և հասարակութեան սէրն ու յարգանքը ի չարը գործ չըդնելով։

—

Առաջիկայ աշնանը՝ինչպէս մեզ հաղորդում են, Թիֆլիսում կըբացւէ պատկերահանդէս, որին կըմասնակցեն տեղական բոլոր նկարիչները։ Չանդիսի ձեռնարկողները յոյս ունին, որ այս անգամ կըլինի աւելի հարուստ և բազմակողմանի։ Շատ նկարիչներ արդէն սկսել են նոր նկարներ պատրաստել առաջիկայ պատկերահանդիսի համար։

—

Հագւում հայկական թատրոնի գործը առաջիկայ սեզոնի համար ապահով կարելի է համարել։ Արդէն Թաղիևի թատրոնը վարձւած է երեկոն 40 րուբլիով, երեքշաբթի և շաբաթ օրերը։ Թատրոնական նորակազմ չանձնաժողովը բանակցութիւններ է սկսել պոլսահան ոյժերի, որոնց թւում և՝ տիկին Սիրանոյշի հետ։ Նախահաշիւը կազմւած է շատ հարուստ. առաջին սեզոնի համար հասնում է 30,000-ի. մի գումար, որ երբէք հայ բեմը չի տեսել։ Մենք կըխօսենք այս մասին մանրամասն և կըյայտնենք մեր կարծիքը, թէ ինչպէս պիտի տանեն բագուցիները թատրոնական գործը, որպէս զի նրանց ջանքերը աւելի արդիւնաւէտ լինեն։

Դպրոցական

Թիֆլիսի III արական գիմնազիոնը այս տարի աւարտեցին 27 հոգի, ստանալով վկայագիր։ Սրանցից 13-ը հայեր են —Առշակ Ազիզեան, Միխայել Զափարեանց, Կարապետ Եղիազարեան, Աստւածատուր Գալստեան, Եազոն Մանդինեան,, Պաւէն Մանդինեան, Արմենակ Օհանջանեան, Գագիկ Պոլոեանց, Ալեքսանդր Տեր-Դաւթեան, Չերակէս Տեր-Միխայելեանց, Լեւոն Զիրոդցեան, Կոնստանդին Զադինեան եւ Եագոր Իւզբաշեան։

—Անդրկովկասեան օրիորդական ինստիտուտում ուսանում են ներկայումս 241 օրիորդ։ Սրանցից 120-ը ռուսուհիներ են, 1-բուլղարուհի, 69-վրացուհի, 44-հայուհի, 5 բրեուհի եւ ուրիշ ազգութիւններից՝ 2։ Այս տարի աւարտեցին ուսման ընթացքը 26 ուսանողուհի, որոնցից 6-ը հայուհիներ են — Դարիա Քաւախեան, Սոֆիա Պոլուխանեան, Մարջան Մելիք-Ադամեան, Վառվառէ Թուրմալեան, Մարիամ Թերալեան (արծաթէ մէդալով) եւ Ջուբանիկ Ճգնաւորեան։

—Թիֆլ. II իգական գիմնազիօնը այս տարի աւարտեցին 32 օրիորդ, որոնցից 8-ը հայուհիներ են. Ասղիկ Անանեան, Նունէ Մարգարեան, Փլորա Յովհաննէսեան, Սոֆիա Պապաեան, Ելենա Սարգսեան, Թամար Սարուխան-բէկեան եւ Վարդուհի Տէր-Ասլանեան։

—Կադետների (գինուորականների) կորպուսում 34 աւարտողներից հինգը հայեր են. Գաբրիել Ղորղանեան, Պետրոս Կամսարական, իշխ. Պ. Արղութեան-Երկայնաբազուկ, Մ. Սարուխանբէկեան եւ Վարդան Տիգրանեան։

—Ներսիսեան դպրոցը աւարտեցին հետեւեալ 26 աշակերտները. Կ. Աբեան, Յ. Աբրահամեան, Մ. Այւազեան, Գ. Անանեան, Մ. Ասատուրեան, Մ. Ասլանեան, Ե. Դեմիրջողլեան, Մ. Զաւախեան, Գ. Խախանեան, Վ. Խուդաւերդեան, Մ. Հովսեան, Ա. Ղազարեան, Պ. Մակարեան, Ա. Մանուկեան-Գրիգորեան, Ա. Մանասեան, Ի. Մարտիրոսեան, Տ. Յովհաննիսեան, Ա. Չամուրեան, Յ. Չարաֆեան, Վ. Սերովբեան, Մ. Վարդանեան, Ա. Տէր-Գրիգորեան, Յ. Տէր-Սահակեան, Յ. Տօնականեան, Յ. Փիրէխանեան եւ Հ. Քարիմեան։

Յոյների օգնութեան հրաւէրը

Յոյն-տաճկական պատերազմը մեծ թշուառութեան մէջ գցեց յունական թագաւորութեան ժողովրդին։ Թեսալիայի հարուստ նահանգը ներկայումս գտնուում է Տաճկաստանի ձեռքում և, ինչպէս լրագիրները հաղորդում են, տաճիկները սկսել են յոյների դառն աշխատանքը վայելել. նրանք արտերը, ցանքսերը հնձում են և սեպհականեցնում։ Բանակցութիւնների դանդաղ ընթացքից օգտւում է Էդհէմ փաշան (որ Ծագումով յոյն է) և տաճիկ զօրքերին սանձարձակ իրաւունքներ է տալիս չարիքներ գործելու։ Երբ այդ արարքների դէմ բողոքեց թագաժառանգ Կոստանդինը, Էդհէմ փաշան պատասխանեց, թէ նա ղեկավարւում է Կ. Պոլսից եկած հրամաններով։ Թեսալիայի քաղաքները, գիւղերը ամայացել են և այդ նահանգի նոր տաճիկ նահանգապետը սպառնում է փախածների գոյքերը սեպհականել, եթէ չվերադառնան։ Ներկայումս ԱԹԷնքում հարիւր հազարաւոր ընտանիքներ կան, որոնք թշուառութեան մէջ են և յոյն կառավարութիւնն անկարող է գտնւում նրանց ամենայնչին կարիքը լցուցանել։

Այդ մեծ թշուառութիւնն ի նկատի ունենալով, արդէն զանազան տեղեր օգնող մասնաժողովներ են կազմել և նիւթատուութիւններ են ընդունում պատերազմից վնասւած ժողովրդի գէթ նիւթական վիճակը թեթեւացնելու։ Թուսխայում էլ Թագաւոր Կայսեր բարեհաճ թոյլտուութեամբ կազմւել է Պետերբուրգում մի յատուկ մասնաժողով և արդէն հրաւէրներով դիմել է կայսրութեան մէջ գտնւող բոլոր ժողովրդին օգնութեան հասնելու ուղղափառ յոյներին։

Մեր կողմից էլ հրաւէր ենք կարդում հայ ժողովրդին, ըստ կարելւոյն նիւթատուութիւններով նպաստելու ներկայումս իր վիճակակից ժողովրդին։ Այն ժողովուրդը, որ երկու ամիս առաջ ազատութեան, իր եղբայրներին օգնելու գաղափարով ոգեւորւած պատերազմ էր մղում, այժմ յուսահատ է եղել և Եւրոպական դիպլոմատիայի ընդունած խաղաղութիւնը չվերանգելու սկզբունքին զոհ դառնալով, ընկճւել է և օգնութիւն է հայցում քրիստոնեայ ժողովուրդներից... Գոնէ այս վերջիններս օգնէին յոյներին։

ՄԱՀԿՈՍՅԱ

† ԳԷՈՐԳ ՔԱՆԱՆԵԱՆ

Մոսկւայում յունիսի 4-ին ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանւեց Լազարեան ճեմարանի վերատեսուչ գաղտ. խորհ. Գէորգ Քանանեան։ Հանգուցեալի մահւամբ հայոց մանկավարժական աշխարհը զրկւեց իր եռանդուն անդամների մէկից, որ դեռ երիտասարդ հասակից իրաւ ուխտ էր այդ ասպարէզում։

Գ. Քանանեանը ծնւել է 1836 թիւն Ղզլարում. սկզբնական կրթութիւնը ստացել է Սուրաբպօլի գիմնազիայում. ապա 1854-ին մտել է Մոսկւայի հասմալսարանի պատմա-լեզուագիտական ճակուլտետը։ Քանանեանը օժտւած լինելով խօսելու ձիրքով, առարկայի հիմնական գիտութեամբ, տաղանդով, շատ սիրեցաւ եւ իբրեւ հմուտ մանկավարժ բազմաթիւ դասեր տուեցին Մոսկւայի կրթական հաստատութիւնների մէջ։ Երբ 1861 թ. պրոֆեսոր Մ. Էմինն Լազարեան ճեմարանի պատասխից հեռացաւ, Քանանեանի թեկնածուութիւնը առաջ քաշւեց եւ ճանաչւեց 25 տ. հաստկից տեսչի պատասխանատու, իսկ 20 տարուց՝ վերատեսուչ, որ մինչեւ մահը վարում էր իր պատասխը։

Հանգուցեալը բէեւ ընկղմւած էր մանկավարժական եւ վարչական գործերի մէջ, սակայն—նա Русс. Вѣд.-ի ասելով—առաջնակարգ գրական տաղանդ ունէր։ Նա ռուսաց լրագիրներում եւ ամսագիրներում շատ յօդւածներ է գեղեցիկ դեռ 1865 թւականից, Զէյթունի ապստամբութեան ժամանակ. վերջին դէպքերը ստիպ եղան նրան պարզաբանել լրագիրներում հայոց հարցը Ալէքսէյ Միխայլովիչի եւ Պետրոս Մեծի ժամանակներից Ռուսիայի՝ հայերի հետ ունեցած յարաբերութիւնների մասին պատմական տեսակէտից։ Իսկ վերջերս պատրաստում էր մի յօդւած, որի սկիզբը յանձնել էր տպագրելու „Братская помощь пострадавшимъ армянамъ“ ժողովածւի խմբագրութեան։ Վերահաս մահը զրկեց նրան հնարաւորութիւնից վերջացնել ու իր յօդւածը։

Քանանեանի գործունէութիւնը կապւած է Թամամ-Քարիպայի գործունէութեան հետ եւ այդ կեդծ անունով լոյս տեսած հրատարակութիւնների մէջ գործօն մասնակցութիւն է ունեցել հանգուցեալը. նոյն իսկ Թամամ-Քարիպա անունը ընդհանուր անուն է եւ կազմւած է Ռափայէլ Պատկանեան եւ Գէորգ Քանանեան ազգանունների տառերից։

Քանաձեռները իր բողած կարողութիւնը, որ մի քանի հազարների է հասնում, կտակել է բարեգործական նպատակների:

Հանգիստ վաստակաւոր մանկավարժին եւ համեստ, ժրաջան գործչին...

ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից լրագիրներին հաղորդում են, որ այնտեղ նորից դրգռումների երկիւղ կայ. սուլթանը իբրև պատասխան պետութիւնների սպառնալիքներին, գրգռում է մահմեդականների մոլեռանդութիւնը: Դրա նշանները հետևեալն է. տաճկաց Սաբահ լրագիրը հաղորդեց, թէ երեք հաւիդի հեծելագնդեր են տեղափոխել վերջերս Քուրդստանից Կ. Պոլիս. իսկ մի ուրիշ լրագիր յայտնեց, թէ Սաբահ լրագրին այդ տեղեկութեան համար նախազգուշացրած է. սակայն այդ տեղեկութիւնը ճիշտ դուրս եկաւ: Daily Chron.-ի ասելով այդ տեսակ գնդերի Կ. Պոլիս գալը նշան է քրիստոնեաների վերջին կոտորածի:

—

Լոնդոնում Անգլիական թագուհու վաթսունամեայ տօնախմբութեան առիթով Գլադստոնի նամակը ձեռք ձեռք է անցնում. պատկառելի ծերունին իր նամակում յոյս է յայտնում, որ բրիտանական կառավարութիւնը կարող կլինի թոյլ չըտալ Տաճկաստանին մասնակցելու թագուհու յոբելեանին: Եթէ Անգլիա գան սուլթանի պատգամաւորները, նրանց պէտք է իրանց համապատասխան ընդունելութիւն ցոյց տալ: Գլադստընը գրելով այդ նամակը, չի կամեցել հրապարակ հանել, բայց այժմ դուրս է եկել նրա ընդհանուր միտքը լրագիրներում և վիճաբանութիւնների նիւթ դարձել:

—

«Times»-ի Կ. Պոլսի թղթակիցը հաստատում է, թէ սուլթանը խնդիրքով դիմեց ռուսական և գերմանական կայսրներին պաշտպանել իր պահանջը Թեսալիայի միացման մասին: Այդ շատ դուր չ'եկաւ միւս չորս մեծ պետութիւնների դեսպաններին: Յունիսի 12-ի ժողովի նիստը չորս ժամ տևեց: Դեսպաններն իրանց բաւականութիւնն են յայտնում այդ ժողովի հետևանքների մասին:

—

Պարսից ընդհանուր հիւպատոս Միրզա Մուրթուզա խանը մտադրւել է հիմնելու Թիֆլիսում մի բարեգործական ընկերութիւն պարսկահպատակների համար: Ցոյս ունենք հայերն էլ կմասնակցեն այդ օգտակար ընկերութեան գլուխ գալուն, որովհետև ընկերութեան նպատակն ընդարձակ է և կըտարածւի բոլոր պարսկահպատակների վրայ:

—

Ներկայումս Թիֆլիսումն է գտնւում կայսերական կալւածների գիւղատնտեսութեան վերատեսուչ Ն. Ա. Դիմգելշտեյն, որ եկել է Կովկաս Ցանօթանալու նրա ոռոգման պայմանների հետ և որոշելու, թէ ինչ միջոցների պէտք է դիմել մեր երկրի ոռոգումը կանոնաւորելու և գետերի՝ գլխաւորապէս Կուրի, Արաքսի, Արփաչայի հեղեղումների առաջն առնելու համար:

Պ. Ն. Դիմգելշտեյն, որ Կովկասին շատ լաւ ծանօթ անձնաւորութիւն (նա եղել է և գրաքննիչ) է, մանաւանդ ոռոգման գործը կանոնաւորելու իր ջանքը չի խնայիլ, քանի որ ահագին տարաձութիւններ (Մուղանի անապատը և այլն) ջրի պակասութեան պատճառով մնում են անօգուտ, անմշակ:

—

Մինչ եւրոպական դիպլոմատները խորհրդակցում են խաղաղութեան պայմանների մասին, Տաճկաստանը սպառազինւում է. Կ. Պոլսում վճռւած է դինել 700,000 հոգի և դրանց նշանակել բացառապէս Եւրոպական Տաճկաստանը պաշտպանելու համար: Իսկ ասիական զաւառների համար կրչւած են տեղական պահեստի զինուորներ:

Մի քանի եւրոպական պետութիւններ աղաղակում էին թէ Տաճկաստանը փող չունի, որ բէֆորմները իրագործէ Հայաստանում, իսկ այժմ դրանք ինչ կասեն այդ սպառազինումների առիթով, որի համար բէֆորմներից հարիւրապատիկ աւելի ռսկիներ են պէտք:

—

Ռուս. գործակալութիւնը հեռագրում է, որ ֆրանսիական ex-կայսրուհի Եւգենիան յունիսի 4-ին Դարդանելի վրայով գալիս է Կովկաս, այցելելու պրինցուհի Միւրատին (ծնեալ իշխանազնուհի Մինգրելեան): Ex-կայսրուհի Եւգենիան վերջերս եղել է Կ. Պոլիս, Ազթենք. Լրագիրների ասելով նա վերոյիշեալ քաղաքներում աշխատում էր ժերոմ Բոնապարտի որդի Նապոլէօնի թեկնածութիւնը Կրետէի իշխանութեան համար աջողացնել:

—

Բազմավէպը հաղորդում է, որ իտալական թագաւորի հրամանով Մխիթարեանների Մուրադ-Ռափայէլեան լիցէօնի դասընթացքը աւարտողները առանց քննութեան կարող են մտնել Իտալիայի համալսարանները: Բացառութիւն կրկազմեն իրաւագիտական, զեղեցիկ գպրութիւնների և իմաստասիրական մասնաճիւղերն աւարտողները, որոնք փակուլտէտները մտնելու համար պէտք է ունենան յունարէնի և լատիներէնի վկայագիր: Այդպիսի արտօնութիւն վաղուց վայելում էր Ռափայէլեան վարժարանը և Փրանսիայում:

—

Պաշտօնական հաշւից երևում է, որ 1897 թւի մայիսի 1-ից մինչև յունիսի 1-ը հայ գաղթականների օգտին ստացել է 25,228 ր. 57 կոպէկ: Այս դումարից նպաստ տրւել է 2,614 ր. 75 կ., ուրեմն մնում է պատրաստի դումար 22,613 ր. 82 կոպէկ:

—

Ազգանստանի էմիրը վճռել է ոչ մի մասնակցութիւն չունենալ թագուհի Վիկտորիայի 60-ամեայ յոբելեանին: Կաբուլի Դրան այս վճիռը մեծ տպաւորութիւն է թողել անգլօ-հնդկական կառավարութեան վրայ: Երևի էմիրի այս վճիռը Անգլիայի դէպի հայերը տածած համակրանքի հետևանք է:

—

Ամսիս 9-ին Արեգիս Կառավարչապետ *Իշխան Դ. Ս. Դոլգորուկի* գբօսնելու ժամանակ առաւօտը Օրթաքեղում հայկական հարուածի պատահեց: Հարուածիչին ուղեկցողներ շրջապատեցին նորին պայծառափայլութեան ուռա գոչելով, եւ խնդրեցին պ. Կառավարչապետին մի բաժակ գինի վայելել ըստ կովկասեան սովորութեան եւ բարեմաղթել երիտասարդ զոյգին երջանկութիւն: Նորին պայծառափայլութիւնը սիրով ընդունեց բաժակը, օրհնեց հարս ու վեսային եւ ընծայեց նոցա մի *Իմպերիալ* իբրեւ յիշատակ: Ժողովուրդը մեծ հրճւանքով ուղեկցեց բաւականաչափ տեղ կառավարչապետին *ուռայի* աղաղակներով:

—

Բուխարայի Էմիրը արտակարգ գնացքով յունիսի 8-ին հասել է Պեատիգորսկ։ Այնտեղի հանքային ջրերից օգտուելուց յետոյ նա կ'ուղևորուի Ղրիմ։

—

Մայիսի 29-ին Կաարիլի գիւղում (Թելաւի գաւառում) կարկուտ եկաւ. կարկտից վչացան խաղողի վազերը, պտղի ծառերը և ուրիշ ցանքսերը մինչև 125 վերստ տարածութիւն։ Վնասը հասնում է 10,500 րուբլու. միևնոյն գաւառի Մագրանի և Բանէուրի գիւղերին կարկուտը 1,200 ր. վնաս է հասցրել։

—

Ներկայումս ֆինանսների մինիստրութեան մէջ ծրագիրն է մշակւում դեղագործը գանձարանին յանձնելու մասին։ Այդ հարցի մշակման համար յանձնաժողով է կազմւում, որի մէջ կըլինեն բժշկական դեպարտամէնտի և ֆինանսների մինիստրութեան ներկայացուցիչները։

—

Յունիսի 4-ին եկած հեղեղները Փիլիջանում քշել են կամուրջը մինչև 37 վերստ տարածութիւն. մի քանի օր հաղորդակցութիւնը ընդհատւել էր։ Այժմ նորից ճանապարհը բացել է և ժամանակաւոր կամուրջ է շինել։

—

Յունիսի 3-ին և 4-ին Ղազախի գաւառում կարկուտ է եկել. շատ գիւղեր են վնասւել։ Դեռ ճիշտ չի յայտնի պատճառած վնասի չափը։

—

Թիֆլիսի նահանգական դատարանը քննելով իշխ. Գլասամիձէի գործը, որ մեղադրւում էր „Нов. Обоз.“ խմբագիր իշխ. Վ. Թումանեանին վատով խփելու համար, դատապարտեց նրան եօթն օրւայ բանտարկութեան։

——

Խառն լուրեր

Կ. Պոլսում բանակցութիւնները շարունակւում են. բանակցութիւնների դանդաղութիւնը բացատրւում է նրանով, որ Թէւֆիկ-փաշան ամեն մի հարցի համար ստիպւած է լինում սպասելու Դրան պատասխանին։ Ամէնքում էլի կրքերը յուզւել են և պատերազմական ոգին զարթել է։ Յոյները ուզում են նորից պատերազմի դուրս գալ, մեծ յոյսեր դնելով Թէրմոպիլէի կիրճի վրայ, որի ամրացնելն արդէն վերջացել է։ Այդ բանին պակաս չէ օգնում այն տեղեկութիւնը, որ Կ. Պոլսում Անգլիան մեծ եռանդով պաշտպանում է Յունաստանին։

—Կ. Պոլսից հեռագրում են, որ վերջին օրերս շատ սոփթաներ և շատ մահմեդականներ են ձերբակալւում։ Այս ձերբակալումները կապ ունեն Թեսալիան Տաճկաստանի հետ միացնելու հարցի հետ։ Ձերբակալածները սրրոպագանդա էին անում յօգուտ Թեսալիայի միացման։

—Ասսամում (Հնդկաստան) երկրաշարժ է եղել, որին զոհ են գնացել 6,000 մարդ։

—Ջէդդայում ժանտախտ յայտնւելը հաստատւում է. մինչև թուով օրական երեք հիւանդութեան դէպք է պատահում. մայիսի 25-ից եղել են 35 հիւանդութեան դէպքեր։ Բարեբախտաբար հիւանդութիւնը սուր բնաւորութիւն չունի։

—Դիպլոմատիական շրջաններում ենթադրում են, որ եթէ Յունաստանի կամ Տաճկաստանի կողմից հաշտութեան պայմանների մասին անսպասելի մերժումներ չլինեն, խաղաղութեան դաշն կըկապւի շուտով։

—Պաշտօնապէս յայտարարւած է, որ այն յոյները, որ պատերազմի պատճառով դուրս են եկել Տաճկաստանից, իրաւունք չունեն վերադառնալու մինչև խաղաղութեան դաշն կնքելը։

—Հաստատ. աղբիւրներից հաղորդում են, որ վերջերս Բուլղարիան զինւում է և զօրքերը կենդրոնացնում է Դոմբրուջիի սահմանի վրայ։

—Պետութիւնները վճռել են Կրէտէի համար կոմիսարներ ընտրել փոքրիկ պետութիւնների ներկայացուցիչներից. իսկ իշխանը պէտք է անպայման չէզոք մարդ լինի։ Ժանդարմերիան կազմւած կրլինի մասամբ տեղացիներից, մասամբ օտարերկրացիներից։ Պատերազմը կայ փոխառութիւն անել կղզու յայտնի եկամուտների գրաւականով. եւրոպական վերահսկողութիւն նշանակելու մասին կարծիքները տարբերւում են և ընդհանուր համաձայնութեան դեռ չեն յանգել։

—Կ. Պոլսում լուրեր են տարածւում, թէ Թուրը կարող է Կրէտէն Յունաստանին տալ, Թեսալիայի փոխարէն, և եթէ Յունաստանը այս բանին համաձայնւի, Թուրը պատրաստ է պատերազմական տուգանքից հրաժարւել։ Բայց պետութիւնները ամենևին չեն համաձայնւիլ այդ բանին։

——

Ընդդիմախօսութիւն

ՆԱՐԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երեւան, 11-ին մայիսի.

Այժմ, երբ վերջացաւ ի մխիթարութիւն ընթերցողների պ. Տ. Յովհաննիսեանի Վարչութեանս հերքման պատասխանը, այն տաղտկալի և սոփեստական quasi—պատասխանը, որ լոյս տեսաւ Մշակի 39, 40, 43, 45, և 48 համարներում, հարեգործական ընկերութեան Երևանի վարչութեան նախկին անդամներիս վրայ բարոյական պարտականութիւն վայ դրաւած՝ վերջացած չըհամարել իր հաշիւը մի այնպիսի մարդու հետ, ինչպես է Տիգր. Յովհաննիսեան, միանդամայն խնդրելով ընթերցողներին ուշադրութիւն դարձնել վիճաբանութեան էական առարկայի վրայ, որը ամեն կերպ ջանք է գործ դրել պ. Յովհաննիսեան, որ ընթերցողի աչքից վրիպի։

Առաջ բերենք գլխաւոր կէտերը միայն.

1-ին. Մի պախարակելի և զզելի վարմունք, որ այս անգամ թոյլ է տալիս պ. Յովհաննիսեան, ուղղակի ընթերցողի աչքն է ծակում այս երկրորդ յօդւածում։ Բանն այն չէ թէ պ. Յովհաննիսեան աշխարհահռչակ հեղինակներից Չիլլերից, Գեօթէից, Ջոյչենհաուէրից, Չպիլգագենից, Չէդերինից և այլն կարողանում է ցիտատներ արտագրել, որոնք տակաւին չըհաստատելով խելքի հարստութիւնը, նրա աղքատութեան հետ միասին ցոյց են տալիս երեխայական պարծենկոտութիւն, այլ—մի յայտնի չափով ընդունակ լինել նրանց բարոյական օրինակներից ներշնչւելու, թէ ինչպէս պէտք է ազնիւ կռիւ մղել հակառակորդների հետ։ Երևակայեցէք. Վարչութիւնը իր ամբողջ կազմով լրջութեամբ քննում է իր կազմած հերքումը, մանրակրկիտ կերպով խմբագրում է ստուգելով գործերի, թուանշանների և դոկումէնտների հետ և բոլոր անդամները գիտակցաբար, հաւասարապէս պատասխանատուութիւնը իրանց վրայ առնելով ստորագրում են յօդւածի տակ. այն ինչ պ. Յովհաննիսեան փոխանակ ամբողջ Վարչութեան պատասխանելու, խնդրին մասնաւոր կերպարանք է տալիս և նրա անդամներից երկուսին պ. Ղարաջեանին և Տէր-Մարտիրոսեանի զատելով մի-մի սեանի զատելով մի-մի սակ լուտանք նրանց գլխին թափում։ Սա կուի ստոր, անազնիւ մի ձև է, որից չէ խորշել պ. Յովհաննիսեան, որովհետև միայն այդ ձևով կարող էր իր նպատակին հասնել—անուանարկել իր անձնական թշնամիներին, հէնց

միայն այդ ստոր նպատակին էլ ծառայեցրեց իր կերքը հրապարակով անւանարկելով մի ամբողջ բարեգործական վարչական կազմակերպութիւն. և վերջապէս, պ. Յովհաննիսեան, ինչով կարող էք ապացուցանել, որ անպատճառ անդամներից երկուսն են կազմել հերքումը և միւսները միայն ստորագրել, քանի որ միւսներն էս հաւասարապէս ընդունակ կարող էին լինել ամեն ժամանակ ձեր ստութիւնները մերկացնել և ճակատ առ ճակատ ձեր դէմ կռւել աներկիւղ, քանի որ արդարութիւնը իրանց կողմն էր։

2-րդ. Երբ Վարչութիւնը Մշակում պախարակեց պ. Յովհաննիսեանի վարմունքը, որով նա Վարչութիւնն անւանարկում էր Նրա մի բանի անդամներին հրապարակով անվստահելի հրատարակելով, նա իր հերքման մէջ պատէ պատ է ընկնում և Մշակի երկու համարներիչորս սեննեակները լեցնում ծիծաղելի և միանգամայն տաղտկալի, կազուիստական ոճով գրւած անհամ բառախաղութիւններով և սոփեստութիւններով։ Յօդւածի այս մասը չիշեցնում է Երևանի մի երևելի մանկավարժին, որը ռուսերէն դարձւածները լաւ իւրացնել տալու մտքով դասարանում աշակերտներին մի գլուխ կրկնել է տալիս. быль-ли ты тамъ, тамъ-ли ты былъ, ты-ли тамъ былъ. Քանաքեռցի աշակերտներից մէկը Երեւանից մինչև Քանաքեռ հասնելը նոյնը անվերջ կրկնելով վերջը тамъ-ли ты былъ, ты-ли тамъ былъ խօսքերը նրա բերանում փոխւում են տրմբըլ տրմբըլ-ի. իսկ և իսկ à la Յովհաննիսեան։

Վարչութեան շատ լաւ յայտնի էր որ Մշակում պ. Տ. Յովհաննիսեան ինքն իր բերանից չէր ասել թէ Վարչութեան անդամներից մի քանիսը անվստահելի են, այլ ուրիշների անհիմն կարծիքն էր լրագրութեան մէջ հրապարակ հանում. բայց եթէ Վարչութիւնը բացարձակապէս մեղադրեց պ. Յովհաննիսեանին, դրա համար նա ունէր հիմնաւոր պատճառներ. 1, որ պ. Յովհաննիսեան դեկտեմբերի 22-ի Վարչութեան անդամների ընտրութիւնից առաջ և թէ մանաւանդ յետոյ ակնյայտնի թշնամական դիրք էր բռնել դէպի Վարչութիւնը. 2. եթէ ինքը համամիտ չէր այդ կարծիքին, երբէք իրան թոյլ չըպէտք է տար նշանակութիւն տալ նրան և հրապարակ հանել դատարկաշրջիկների փողոցային անարգ բամբասանքները կամ պէտք է ընդունել, որ պ. Յովհաննիսեան համամիտ է եղել այդ կարծիքին և ursաց դէմ է եղել պարահանդէսի արդիւնքը հարեգործ. ընկերութեան յատկացնելուն, ինչպէս շատ նշաններից երևում է, կամ թէ՝ չըննայելով որ մի տեղ իր յօդւածում պախարակում է բեխերաւոր կեկելօնեին, ինքն իսկապէս հանդիսանում է բեխերաւոր կեկելօ նոյն բամբասանքները լրագրութեան նիւթ շինելով։ Վարչութիւնս հակւած է սակայն առաջին պարբերութիւնը ընդունել միակ հիմնաւոր։

3-րդ. Մենք մեր հերքման մէջ յայտնեցինք, որ պ. Յովհաննիսեանը յօգուտ դպրոցական ների տւած պարահանդէսը գլուխ բերելու համար ինչիցիատորի կամ աչքի ընկնող դեր չէ խաղացել. այդ սկզբում ենք և այժմ նրա բացատրութիւնից յետոյ էլ. որովհետև եթէ սոսկ մասնակցող չըլինէր, այլ ընդհակառակը՝ նախ՝ իր ընկերների մէջ կըլաջողացնէր համաձայնութիւն կայացնել արդիւնքը հարեգործական ընկերութեան օգտին յատկացնելու վերաբերմամբ և երկրորդ՝ կ՚ապացուցանէր, որ ինքը համամիտ չէ Վարչութեանս մասին աննպաստ կարծիք ունեցող հրապարակով անունները չիշատակելու անգամ անարժան իր մէկ կամ երկու ընկերների հետ։ Մեր ասածի փառաւոր ապացոյցը տւեց մեզ պ. Յովհաննիսեան, երբ հէնց ուղղ իր ինչիցիատիւով, իր ջանքերով վերջերս (փետրւար ամսին) կազմած թեմ. դպր. չքաւոր աշակերտների օգտին պարահանդէսը տւեց, ինչ էք կարծում, ընթերցող, որքան, 1615 րուբլի. օ՛ոչ, ի գժբախտութիւն խեղճ աշակերտների և նրանց տեսչի պարծենկոտութեան դեռ 300 րուբլուց էլ պակաս։

4 րդ. Վարչութեան համար կատարեալ հանելուկ է դարձել—անբացատրելի մինչև այժմ այն թէ յօգուտ գաղթականների տւած պարահանդէսի արդիւնքը թոյլատրւած լինելով պ. նահանգապետից քաղաքացին կոմիսիայի ձեռքով կարգադրելու պայմանով և թէ ճիշտ լինելով պ. Մելիք-Ադամալեանի տւած խնդիրքում յիշատակւած-весь сборъ будетъ переданъ въ назначенную вашимъ сіятельствомъ городскую комиссію съ спеціальнымъ назначеніемъ покупки для болѣе нуждающихся одежды и съѣстныхъ припасовъ—իսօսքերը, ասա ինչպէս դուք, պ. Յովհաննիսեան, և թէ միւսները սրբազան առաջնորդի մօտ կայացած ժողովներում պարահանդէսի թոյլտւութիւնը արդէն ստացւած ժամանակ և թէ տեղի ունենալուց յետոյ էլ կարգադրութիւններ էիք անում, պլաններ սարքում նրա արդիւնքի գործադրութեան մասին, խոստանում էիք պարահանդէսի արդիւնքով հիւանդանոց բանալ, բժիշկ հրաւիրել, դեղատուն հիմնել և այլն և այլն. մինչև անդամ դուք հանդիսաւոր կերպով առանձնապէս խոստացաք դիմել մի խումբ օրիորդների և տիկինների, որոնք իրր ողորմածութեան քոյրեր պիտի խնամէին հիւանդ գաղթականներին. մի մոռանաք միևնոյն ժամանակ Վարչութեան անդամներին ձեր և թէ միւսների յայտնած այս խօսքերը թէ «պարոններ, ձեր ոյժերը առ այժմ պահպանեցէք մօտաւոր ապագայի համար, մենք այդ գումարը կըգործադրենք գաղթականների համար հիւանդանոց բանալու և այլ պէտքերի վրայ». սա ինչ անբացատրելի հանելուկ էր *)։

5-րդ. Վերջին ընդհանուր ժողովներում, ուր քննւում էր կէտ առ կէտ վարչութեանս 96 թվի գործունէութեան վերաստուգող յանձնաժողովի զեկուցումը, պ. Յովհաննիսեան, որ ամենայնչին առիթով իսկ չէր էր գործ ունում ժողովականների համբերութիւնը իր արտայայտած անզուսպ կրքով դէպի Վարչութիւնը, յայտնեց ի միջի այլոց, որ ինքը հարց է կամենում դնել ժողովում, որ Վարչութիւնը թոյլ է գտնւել գաղթականների օգտին նւէրներ հաւաքելու գործում. Հրհերքելով այն կէտը թէ Վարչութիւնս ոչ թէ հաւաքել է գաղթականների օգտին 160 ր., ինչպէս գրում էլ է նա չարամտաբար Մշակում, այլ օժանդակութիւն է ցոյց տւել կարճ միջոցում բացառապէս գաղթականներին 3854 ր. 40 կ. թէ գրամով և թէ հագուստով, հարկ ենք համարում յայտնել, որ ընդհանուր ժողովը զգւանք զգալով դէպի մի այդպիսի առաջարկութիւն, միաձայն մերժեց, այն առարկութիւնը թէ Վարչութիւնը անպայման պարտաւոր էր 1896 թվին թեմ. դպր. աշակերտներին հագուստներ տալ ընդհանուր ժողովի վճռի համաձայն, որպիսի վճիռ երբէք եղած չէ և թէ ժողովի նիստի արձանագրութեան մէջ չըկայ և մի խօսք հագուստի մասին։

6-րդ. Պ. Յովհաննիսեան մեղայական է կանչում և ներողութիւն խնդրելով Վարչութիւնից՝ հրապարակաւ յետ է վերցնում իր այն մեղադրանքը թէ Վարչութիւնս անսիրs էր վերաբերւել դէպի աշակերտները։ Միայն այդ կէտում չէ, որ պ. Յովհաննիսեանը մեղայ պիտի գոչէ, այլ ընդհանրապէս իր պախարակելի արարքի համար, որով անարդար կերպով ոտի տակ էր տալիս մի վարչութեան անբիծ գործունէութիւն։ Բայց ինչ արած, պ. Յովհան-

*) Այդ առաջապետական հիւանդանոցի հարցի մասին տես Մշակ № 13 բժ. ուսուն. Նոր Նայրապետեանի նամակը Երևանից։

նիսեանի չիշեալ մեղայականն ևս պայմանաւորւած է պաշտօնական դոկումէնտի աղաւաղումով. վասն որոյ այդ մեղայականը թւում է մեզ ոչ մաքուր սրտից բղխած։ Նա Վարչութեան գրութիւնից բերում է միայն հետևեալ կտորը.—«Իսկ ինչ վերաբերում է ձեր այն հարցին, թէ այս տարի էլ անցեալ տարւայ պէս կարող է Վարչութիւնս 150 ր. չատկացնել չքաւոր աշակերտներին, պատիւ ունի չայտնելու, որ գաղթականներին օգնելու պատճառով չէ կարող չատկացնել»...։ Այստեղ պ. Յովհաննիսեան բարւոք է համարել վերջակէտ դնել. եթէ այդպէս անել, իրաւի դուրս է գալիս այս թէ՝ անցեալ տարւայ պէս վարչութիւնս չէ կարող 150 ր. չատկացնել աշակերտներին՝ գաղթականներին օգնելու պատճառով։ Մինչդեռ Վարչութիւնս գրում է. «Իսկ ինչ վերաբերում է ձեր այն հարցին թէ և այն... պատիւ ունի չայտնելու, որ գաղթականներին օգնելու պատճառով չէ կարող չատկացնել *) բացի 150 ր. գումարից, որ որոշւած է տալ որդեգիրներին և այլն»։ Սրանից պարզ հասկանալի է, որ Վարչութիւնը ուզում է ասել, որ ուրիշ գումար չունի չատկացնելու աշակերտներին, բացի որդեգիրների համար նախահաշւով որոշւած 150 ր., որ և չանձնւած է իրան տեսչին դեկտեմբերի 11-ին։

7-րդ. Վարչութիւնը պատասխանելով պ. Յովհաննիսեանին, որ սա անւանել էր նրան անսիրտ աշակերտներին օգնութեան գործում՝ հրապարակ էր հանել ի միջի այլոց այն փաստը, որը վերաբերումէ Ֆէյէկեան քոյրերի ներկայացումից Թեմ. դպրոցի աշակերտների օգտին չատկացրած գումարին և որը պ. Յովհաննիսեան ինսպեկտուացիա էանւանում։ Այդ փաստը հաղորդելիս մենք երբէք չենք կամեցել ինսպեկտուացի անել հասկացնել տալու թէ իբր գումարը ստացած լինի պ. Յովհաննիսեան, վատնած կամ այսպէս թէ այնպէս նպատակին գործադրած չլինի։ Հաստատ աղբիւրից տեղեկացած լինելով այդ փաստի մասին, մեր ցանկութիւնն էր միայն, որ հրապարակով պարզուէր թէ նա որքան պարտաճանաչ է գտնւել դէպի դպրոցը և թէ որքան նրա սիրտը բաբախել է չքաւոր աշակերտների մերկութիւնը ծածկելու խնդրով։ Եւ հարցը պարզելիս պ. Յովհաննիսեան թոյլ է տալիս մի ապշեցուցիչ, հրէշաւոր սուտ հնուցել անդամ տիկ. Հռիփսիմէ Տէր-Մկրտչեանի վերաբերմամբ, որին իբրև թէ նա՝ պ. Յովհաննիսեան հանգամանաւորեն պատմած լինի դէպքի մասին։

*) Այսինքն որև է գումար։

Տիկին Տէր-Մկրտչեան հրապարակով արտայայտում է իր դժգոհութիւնը պ. Յովհաննիսեանի մի այդպիսի անագնիւ վարմունքի համար, չայտնելով միանգամայն որ իրան պ. Յովհաննիսեան հանգամանաւորեն պատմութիւն երբէք չէ արել, ուստի և ինքը չէր կարող Վարչութեան միւս անդամներին հանգամանաւորեն հաղորդել եղելութեան մասին։ Թողնելով այդ տգեղ միջադէպը, որի հեղինակները կարող են լինել միայն Յովհաննիսեանների նմանները, անցնենք առաջ։

Բարեգործական ընկերութեան Երևանի Վարչութեան Նախկին անդամներ՝

Հռիփսիմէ Տէր-Մկրտչեանց. Գէորգ Ղարաջեանց. Տիգրան Տէր-Յակովբեանց. Սիրական Տէր-Մարտիրոսեանց. Սարգիս Աւետիսեան։

(Վերջը միւս անգամ)

Մեր պատկերները

I

Հին դիպլոմատներ

Մինչ տանիկները իրանց աւերածութիւնները շարունակում են Թեսալիայում եւ Հայաստանում, եւրոպական ինչ դիպլոմատներ խմբւած իրանց կաբինետներում եւ գլուխ գլխի տւած՝ լրագիր կարդալով իրար ուզում են բացատրել, հասկացնել, դիպլոմատիայի յաջողութիւնը։ Նրանք հաւանում են Ըւրոպայի բռնած ուղղութիւնը, որ կարող եղաւ այսպիսի խառնակ ժամանակ խաղաղութիւն պահպանել։ Իւմորով է նկարիչը դուրս բերել այդ դիպլոմատների տիպերը։

II

ՊԱՐՍԿՈՒՀԻ. Ֆարմա-խանում.

Մեր առաջ կանգնած է Աբեւելի դուստրը. հոլանի, նազուկ ձեռքերը կցած՝ նա իր հպարտ աչքերը չի բանում, զգալով կարծես նրանց թովիչ ազդեցութիւնը։

Ֆարքման նրատալի է եւ նկարիչը տաղանդով է գծել նրա գեղեցիկ դիմագիծը եւ ամպի նման ալեծածան զգեստը, որ իջնում է մինչեւ ոտները։

Այլ եւ այլ

ՋՈՐՀՈՒՐԵԼԻ ԱՂԷՏ ՓՐՈՆՍԻՈՅՈՒՄ

Յունիսի 6-ին Փրանսիայի Վուարոն քաղաքը զարհուրելի աղէտի ենթարկւեց։ Այդ արդիւնաբերական քաղաքը կործանւեց իր մեսամբ, թղթի եւ բամբակի գործարաններով։ Հենց գործատորները սպանել հաշիւներ, ուրախ ուրախ գնում իրանց տները, յանկարծ հեղեղ եկաւ, որի հետեւեց ցիկլոն։ Ժամու կէսուայ ընթացքում մոտ գետը դուրս եկաւ իր ափերից եւ 6—7 մետր բարձրութեամբ ծածկեց շրջակայքը, գործարանները, կալւածները, դաշտերը եւ տները։ Վուարոն քաղաքը ամբողջովին կորաւ չրի տակ։ Գազանցիային խողովակները փշրւեցին եւ քաղաքը սարսափահար խաւարի մէջ ընկղմւեց։ Տները, գործարանները չուրը քաշեց տարաւ, մնացին միայն պատերը։ Մինչեւ 400 մեհենայ խլւած են եւ տարւած։ Հենց միայն Կատէլրաճի կալւածքի հետքը չի երեւում։ Հեղեղման ժամանակ քաղաքը սարսափելի տեսարան էր ներկայացնում եւ ինչպես ովկեանոսի վրայ չողում էին թղթի կոյտեր, մետաքս, կանեփարտիլ, մեխանաներ եւ տան սարք ու կարգ։ Մի թղթի գործարանից տարւած է 600,000 կիլօ թուղթ. մինչեւ 10,000 կիլօ էլ մետաքս է փչացած։ Վնասները առ այժմ հինգ միլիոն են հաշւում, այն էլ մօտաւորապէս։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ալէքսանդրապոլ. Թ. Ս. Յօդւածի առաջին մասը գրած է, պէտք էր վաղօրօք յայտնէիր։ Կարող էք օգտւել միայն շարւածքից եւ սրբագրութիւնից, մնացեալ նախսեր նոյնը կրմնան։

Շուշի. Ե. Ճ. Բարեհաճեցէք ստանալ այդտեղի գրադ.-ընքերցարանից։

Սամարղ. Գ. Գ. Ուղարկած են։ Եթէ չէք ստացել, պոստի վարչութեան միջոցով յայտնեցէք, որ ստուգենք։

Ամերիկա. Col. P. **Ազատ.** Հեզանից 5 դոլար ոչ լուսնար եւ ոչ վեցուար ամսին չենք ստացել։ *Տարազի* տարեկան գինը արտասահմանի համար 30 ֆր. է, *Աղբիւրինը*՝ 12 ֆր. սակ բոլոր հաշիւը։ Անցեալ տարւայ բաժանորդագինն էլ չէ ստացւած։ **Մ. Ա.** Ձիւմանեանին ուղարկւում է *Տարազ*։

London. Dulau et Cie. Հեզ մանրամասն նամակ գրեցինք։

Գանձակ. Գ. Հ. Հասարակ միջատներից, գեղուհիներից ազատւելու շատ հնարներ կան։ Ի զուր էք զայրանում։ Ամենից առաջ՝ մարդութիւն։ Ճանճերից խպատ ազատ մնալու համար մի ափսեի մէջ ածեցէք *պրօւանսի ձէթ* եւ դրէք բաց պատուհանի առաջ։ Ճանճերը սասսիկ խորտում են դրա հոտից եւ սենեակ չեն մտնիլ, բանի որ նրանք այդ հոտը զգան։ Խոհանոցների պատերը այդ ձէթով սրսկեցէք։

Մրջիւնները սովորութիւն ունեն խրմբովին կատարել իրանց արշաւանքն ու գրսանքը։ Լաւ դիտեցէք եւ իսկոյն կրգտնէք այդ բանակի ոկիզբը թէ որ կողմից է գալիս։ Ածեցէք այնտեղ մի բիչ ճաւթ, ճաւթալին եւ փշրւած ապակիով ծածկեցէք նրանց մուտքի բերանը։

Հ. Նախիջեւան. Ե. Ն. Ի զուր էք կարծում թէ մեծ խնայողութիւնը, գրկանքներ կարող են բարեբեր ներգործութիւն ունենալ։ Սասսիկ ընդլայնութիւնը կառաջացնէ անտարբերութիւն, իշով բանականանալը յետադիմութիւն եւ մեռելութիւն։ Ընդհակառակ, կեանքից շատ պահանջներ արէք եւ ինքներդ էլ ձեռնարկեցէք ձեր ձգտումները իրագործել։

Հինաստանից մշակների մի մեծ գաղութ նորեկս գնացել էր Ամերիկա եւ շատ էժան օրավարձով բանում: Տեղացի մշակները բողոքեցին նրանց դէմ, առարկելով, որ նրանք անասունների նման խան-երեսուն հոգով մի սենեակում միմեանց վրայ թափուած պարկում են, հագնւում են կեղտոտ, ուտում են հատարակ կանաչեղէն եւ օրական 18 ժամ բանում: Մինչդեռ իրանք ութ ժամից աւելի անկարող են բանել, օրական երեք ռուբլի կառավարութիւնը իրաւացի գտաւ նրանց բողոքը եւ արտասեց չինացիներին:

Այժմ դուք այդտեղ կամենում էք առանց ծախսերի լրագիրներ կարդալ, փափուկ ապրել եւն: Չէ՞, պահանջներ ունեցել եւ աշխատեցէք շրջահայեաց լինել, մշակել ձեր երկրի հարուստ բերքերը: Նոյը այդտեղ գինի շինեց, իսկ դուք միայն խմում էք, առանց ընդառաջակելու այդ գործը եւ արտահանելու:

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ

4 գոյնով տպագրւած, 64 թերթիկների վրայ, 101 հետաքրքիր եւ գեղեցիկ պատկերներ, նկարներ

ԳԻՆԸ 2 ր.

Աղբիւր եւ Տարազի 96 եւ 97 թ. բաժանորդների համար 1 ր. 25 կ.

Դիմել՝ Тифлисъ, Агбюръ կամ Таразъ.

Աղբիւր-Տարազի

գրասենեակում Իտալիայից եւ Ֆրանսիայից ստացել են մեծ քանակութեամբ 200 **տեսակից աւելի** *օդեօգրաֆիական շատ գեղեցիկ* **ՊԱՏԿԵՐՆԵՐ, հատը նամակարհամբ** 30 **կ. մինչ** 3 **ր.**

Թարգմանւում է

Սեբաստիան Կնայպի

„МОЕ ЧУДЕСНОЕ ВОДОЛѢЧЕНІЕ“

հեղինակութիւնը:

5—5

Թիֆլիսի Կենդրոնական, Կովկասեան եւ զանազան բաղաքների գրավաճառանոցներում ծախւում է

ԱՏՐՊԵՏ

«Արմաս» վէպ բարձր-Հայոց կեանքից. գինն է. . . . . 2 ր.

«Խեւ-Կարապետ» վէպ Հայ-կաթոլիկների կեանքից . . . . . 1 ր.

«Զուռնա» ողբերգ. օպերայի համար թուրք Հայոց կեանքից. . . 1 ր.

«Սարոփ» ողբերգութիւն տաճկ. պատ. կեանքից. . . . . 30 կ.

Սրբազան Իշմիրլեան պատրիարքի

ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐԸ

նկար Ս. Սողոմոնեանի

Վաճառւում է Աղբիւր-Տարազի խմբագրութեան գրասենեակում, ճանապարհածախսով 1 ր.

«Ա Ղ Բ Ի Ւ Ր»

Միամսեայ պատկերազարդ

ՀԱՆԳԷՍ

Տարեկան գինը 3 ր. (առաքումն 4 ր.)

Հասցէն՝ Тифлисъ.

Редакція Агбюръ.

Зуболѣчебный Кабинетъ Д-та Кавказскаго Офицерскаго Эконом. общества Ю. А ФРАНКЪ. Лѣченіе, пломбированіе, извлеченіе и вставленіе искусственныхъ зубовъ. Пріемъ больныхъ отъ 9-хъ час. утра до 7-ми часовъ вечера.

Головинскій пр. д. Сергѣева № 7

10—7

Անդրկովկասեան երկաթուղի
(Մայիսի 6-ից)

Կայարան	Բազէի-Բաթում Մարդատար Գալիս	Մարդատար Գնում	Փոստային Գալիս	Փոստային Գնում
		օր.		զիշ.
Բագու .	—	4.01	—	12.06
Եւլախ .	11.51	12.06	9.22	9.45
Գանձակ	2.14	2·28	12.80	12.30
Ազստաֆ.	5·20	5.35	3.40	3.59
Թիֆլիս	ա. 8.30	ա. 9.15	եր.7 10	եր.8 00
Գորի . .	11·20	11.27	10·16	10.25
Մլխայլ.	12.37	12.52	11.10	11.54
Խաշուռի	եր.8 48	—	ա. 8.45	—

Կայարան	Բաթումի-Բագու			
Խաշուռի	—	7.45	—	եր.8.35
Մլխայլ.	4.42	5.12	5.27	5.42
Գորի . .	6.20	6.36	6.50	7.00
Թիֆլիս	եր8 .34	եր.9.34	ա. 9.11	ա.11.00
Ազստաֆ.	12.16	2.27	2.00	2.20
Գանձակ	3.12	3.22	5.30	6.00
Եւլախ .	5.08	5.18	8.03	8.20
Բաու .	օր.1.02	—	ա. 6.00	—

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ճենապակու վրայ պատկերը վաճառւում է հատը 10 ր. ճանապարհածախսով։

Աղբիւր-Տարազի գրասենեակում վաճառւում են

	Ր. Կ.
ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ 4 գոյնով, ազգ. և այլն 101 պատկեր. 2 ր. փոխ.	1 25
ՍԱՍՈՒՆՑԻ ԿԵՆԴԻՑ—Դերեզմի Երկուսից IX դարու (սակաւաթիւ) .	2 —
Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ. Բանաստեղծութիւններ 1 ր. 50 կ. փոխարէն . .	1 —
ՅՈՎՀ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ. Բանաստեղծութիւններ 60 կ. փոխ. . .	— 30
ՍՐԻՆԳ. Բնութեան երգեր և բանաստեղծութիւններ 80 կ. փոխ.	— 50
Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ճենապակու վրայ պատկերը (սակաւաթիւ) . . .	10 —
ԴՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒՆԻ պատկերը 6 ր. փոխ.	4 —
ԲԵՐԿՐԱՆՔ, խրօմօ-ակւարել, ՌԱՓԱՅԷԼԻ Մադօնաներ, հրեշտակներ, ՐՈՒԲԵՆՍԻ Յիսուս և Տիրամայր, ՉԻՔՈՊԻՐԻ Խմէօ-Զուլիէթ թափանցիկ լուսի դէմ նկար, ընդամենը 8 պատկեր. 2 ր. փոխարէն .	— 60
ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ մեծադիր ֆոտօ-գրաւիւր պատկերը .	1 20
ՀԱՐԷՄԻ ԱՂՋԻԿԸ ոսկէ շղթաներում	— 50
ՄԱՅՐԻԿԻ ՆՆՋԱՐԱՆՈՒՄ խրօմօ	1 30
ՁՄԵՌ	— 20
ԱՐՏԱՂԵՍ Ե. թադաւորի մուտքը ի Հռոմ.	— 30

Дозв. ценз. Тифлисъ, 14 іюня 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2.